



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2020 թվականի N 60-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2020 թվականի փետրվարի 21-ի N 123 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար *Քրիստինե Մանուկյանին*՝ 2020 թվականի փետրվարի 24-ին մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, շախմատի ուսուցիչների համար կազմակերպվող սեմինարին մասնակցելու համար:

2. *Քրիստինե Մանուկյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ *Անի Մարտիրոսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2020 թվականի փետրվարի 24
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

